

ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ



ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Աղքատության վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 4.2. Փորձնական հետազոտության արդյունքների թեստավորում

Առաքելության փորձագետներ

Պրն Դավիդե Դի Լաուրեա, Իտալիայի վիճակագրություն

Պրն Յուհա Հոնկիլա, Ֆինլանդիայի վիճակագրություն

2015թ. նոյեմբերի 9-13

Վերջնական տարբերակ



ՀՀ ազգային վիճակագրական
ծառայություն



Փորձագետների կոնսուլտային տվյալներ

Դավիդե Դի Լաուրեա
Իտալիայի վիճակագրություն
Վիալե Օկեանո Փասիֆիկո 171/173
00144
Հռոմ, Իտալիա
Հեռ.՝ +390652734738
Էլ. հասցե՝ dilaurea@istat.it

Յուհա Հոնկիլա
Ֆինլանդիայի վիճակագրություն
Տյոպայանկատու 13
00022 Ֆինլանդիայի վիճակագրություն
Հելսինկի, Ֆինլանդիա
Հեռ.՝ +358295513651
Էլ. հասցե՝ juha.honkkila@stat.fi

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ.....	4
2. Գնահատում և արդյունքներ.....	4
3. Եզրակացություններ և առաջարկություններ.....	6
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք	17
Հավելված 2. Առաքելության ծրագիրը	19
Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ.....	21
Հավելված 4. 2016թ. սոցիալական բացառումների մոդուլի հարցաթերթ.....	22
Հավելված 5. 2016 թ. ՏՏԿԱՀ հարցաթերթի համար առաջարկվող փոփոխություններ	25
Հավելված 6. 2016/17 թ.թ. երեխաների կարիքների հարցաթերթի համար առաջարկվող փոփոխություններ.....	29
Հավելված 7. 2017 թ. ՏՏԿԱՀ հարցաթերթի համար առաջարկվող փոփոխություններ	31
Հավելված 8. Փորձնական հետազոտության վերլուծության արդյունքները	46

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա 4-րդ բաղադրիչի երկրորդ առաքելությունն էր, որի գործողություններն իրականացվել են առաքելության ծրագրի ժամանակացույցի համաձայն:

Գործողության նպատակներն էին.

- Հավաքագրված փորձնական տվյալների ուսումնասիրում
- Տվյալների որակի վերլուծություն
- Հարցաթերթի լրամշակում
- Տարեկան SSԿԱՀ-ում հարցաթերթի ինտեգրման պլան
- Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում քննարկումներում

Փորձագետները կցանկանային իրենց անկեղծ երախտիքը հայտնել բոլոր պաշտոնյաներին և անհատներին Հայաստան կատարած այցի ընթացքում աջակցության և արժեքավոր տեղեկության համար, ինչը մեծապես նպաստել է իրենց աշխատանքին: Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Իտալիայի, Ֆինլանդիայի և Դանիայի վիճակագրական ծառայությունների կարծիքների հետ:

2. Գնահատում և արդյունքներ

Ընթացիկ իրավիճակի գնահատում

2015 թվականի սեպտեմբերին կայացած առաքելությունից ի վեր ՀՀ ԱՎԾ-ն իրակացրել է փորձնական հետազոտություն 48 տնային տնտեսության համար: Փորձնական հետազոտությունը հավաքագրել է տվյալներ 6 բաժինների և 26 փոփոխականների համար նյութական զրկվածության վերաբերյալ թե՛ տնային տնտեսության, թե՛ անհատների մակարդակով, ինչպես նաև երեխաներին վերաբերվող հարցեր: Մասնավորապես, վերջնական փոփոխականները հիմնականում գրանցվել են տնային տնտեսության մակարդակով, բայց կային հինգ հարցեր, որոնք տրվել են տնային տնտեսության յուրաքանչյուր չափահասի համար (16 կամ բարձր) և հինգ հարց տնային տնտեսության բոլոր երեխաների համար:

Փորձնական հետազոտության որակական գնահատում

Փորձնական հետազոտության տվյալների արդյունքների որակը գնահատվել է երկու տեսանկյունից: Նախ և առաջ, հիմնական SS ԿԱՀ-ն ներառում էր որոշ հարցեր, որոնք բավականին նման են փորձնական հետազոտության հարցերին: Երկրորդ, քանի որ փորձնական հետազոտության բովանդակությունը հիմնված էր ԵՄ-SSԿԱՀ ընթացքում հավաքագրված փոփոխականների վրա, Հայաստանի փորձնական հետազոտությունից ստացված պատասխանների բաշխումը կարող է

համադրվել ԵՄ-ՏՏԿԱՀ բաշխումների հետ: Մինչդեռ շատ ԵՄ երկրներ չեն կարող համարվել լավ հենանիշ Հայաստանի տվյալների համար, Հայաստանի տվյալների ԵՄ ցածր եկամուտ ունեցող երկրների, ինչպիսիք են Բուլղարիան, Ռումինիան, Լատվիան, Լիտվան կամ Հունգարիան, տվյալների հետ համադրությունը կարող է արձանագրել փորձնական հետազոտության գոհացուցիչ արդյունքներ: Փորձնական հետազոտության արդյունքները, ինչպես նաև Հայաստանի ՏՏԿԱ հետազոտության և ԵՄ ընտրված երկրների համադրելի տվյալները ներկայացված են Հավելված 8-ում:

Փորձնական հետազոտության և հուլիսին կայացած ՏՏԿԱ հետազոտության համահունչ լինելը փորձարկվել է այն հարցերի համար, որոնք բավականին նման են այս երկու աղբյուրներում: Այս հարցերն էին. ունենալ համակարգիչ, ինտերնետային կապ, հեռախոս, մեքենա և տունը բավականաչափ տաք պահելու հնարավորություն:

Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ ունենալու վերաբերյալ հարցերի դեպքում փորձնական հետազոտության և ՏՏԿԱ հետազոտության միջև փոխկապակցվածությունը գոհացուցիչ էր: Փորձնական հետազոտության նպատակն էր զանազանել երկարաժամկետ օգտագործման ապրանքներ ֆինանսապես իրենց թույլ չտվող տնային տնտեսությունների և դրանք՝ այլ պատճառներով իրենց թույլ չտվող տնային տնտեսությունների միջև: Փորձնական հետազոտությունը ծառայեց այս նպատակին, և չհաշված չնչին բացառությունները, հարցերի բաշխումը գրեթե նույնն էին երկու հետազոտությունների դեպքում: Հետազոտության համար ընտրված տնային տնտեսություններից նրանք, ովքեր պատասխանել էին, որ ունեն երկարաժամկետ օգտագործման ապրանք հուլիսին կայացած ՏՏԿԱՀ-ի ժամանակ, փորձնական հետազոտության դեպքում նույնպես նույն կերպ են պատասխանել: Երկու հետազոտությունների միջև ժամանակային տարբերությունը հաշվի առնելով՝ չնչին տարբերություններն ընդունելի են:

Երեխաների նյութական զրկվածության վերաբերյալ տվյալները հավաքագրվել են տնային տնտեսության մակարդակով: Կային չնչին անհամապատասխանություններ «կիրառելի չէ» պատասխանների վերաբերյալ, որոնք կարող են խնդիրներ առաջացնել կապված հարցի թյուրմեմբան հետ: Սրանից խուսափելու նպատակով առաջարկվել է հարցերի նոր դասավորվածություն, ինչը ներկայացված է ներքոհիշյալ բաժիններում:

ԵՄ ցածր եկամուտ ունեցող երկրների արդյունքների հետ համադրությունը (~~ԵՄ-ՏՏԿԱՀ հետազոտություններ~~

2009 և 2012 թվականների համար) ցույց է տալիս, որ Հայաստանի արդյունքները գոհացուցիչ են: Որոշ փոփոխականների համար փորձնական հետազոտությունը ցույց է տալիս Հայաստանում զրկվածության բարձր աստիճան: Հայաստանի և ԵՄ ցածր եկամուտ ունեցող երկրների միջև ամենանշանակալի տարբերությունները կապված են կոմունալ վճարների պարտքերի, տունը բավականաչափ տաք պահելու, երկու օրը մեկ իրենց՝ մսով, հավով կամ ձկով ճաշ թույլ տալու,

ընկերների հետ հավաքվելու, ժամանցի հնարավորությունների և ծայրը ծայրին դժվարությամբ հասցնելու հետ: Հաշվի առնելով Հայաստանում եկամտի ցածր մակարդակը՝ նույնիսկ ԵՄ ցածր եկամուտ ունեցող երկրների հետ համեմատությամբ, սա կարող է լինել իրական իրավիճակի արտացոլումը:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Փորձնական հետազոտության վրա հիմնված եզրակացություններ և առաջարկություններ

Փորձնական հետազոտության տվյալների փոխկապակցվածության և գոհացուցիչ արդյունքների հիման վրա վերլուծության եզրակացությունն է պահպանել հարցերը նույն ձևաչափով, ինչպես որ փորձնական հետազոտության մեջ: Պարզաբանումների նպատակով վերանայվեցին որոշ թարգմանություններ:

Ամբողջ բնակչության համար ՏՏԿԱ հետազոտությունում նյութական զրկվածության վերաբերյալ հարցեր ընդգերկելը հնարավորություն կտա գնահատել համապատասխան ցուցանիշը համաձայն եվրոպական մակարդակով նոր հաստատված կանոնների սկսած 2016 թվականից. ՀՀ ԱՎԾ-ն դա կունենա միևնույն ժամանակ, ինչ եվրոպական ազգային վիճակագրական ծառայությունները: Ավելին, ՀՀ ԱՎԾ-ն ի վիճակի կլինի գնահատել նույն ցուցանիշի գործող տարբերակը, որը վավեր է 2004-ից մինչև 2015 թվականը: Եվս երեք հարց (որոնք անհրաժեշտ են նյութական զրկվածության ցուցանիշի ներկայիս տարբերակի գնահատման համար, բայց որոնք անհրաժեշտ չեն նորի համար) տալու հետ կապված մեծ բեռը պետք է ավելի քան փոխհատուցվի եվրոպական տվյալների հետ լիարժեք համադրելիության օգուտներով:

Ինչ վերաբերվում է երեխաների հետ կապված նյութական զրկվածության հարցերին, միակ առաջարկվող նշանակալի փոփոխությունն այն է, որ դրանք տնային տնտեսության մակարդակով տրվելու փոխարեն տրվեն յուրաքանչյուր երեխայի համար:

Այս մոտեցմամբ ցուցանիշները, որոնք համադրելի են ԵՄ-ՏՏԿԱՀ արտահերթ մոդուլում օգտագործվող չափանիշների, ինչպես նաև ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի չափանիշների հետ, կարող են հաշվարկվել:

Նյութական զրկվածության վերաբերյալ հարցերը ապագայում պետք է տրվեն ԿԱՀ հետազոտության համատեքստում: Առաջարկվող պլանն է.

1. 2016 թվականին որպես առանձին մոդուլ ընդգրկել ավելի շատ հարցեր նյութական զրկվածության վերաբերյալ,
2. 2016 թվականի հիմնական հարցաթերթը համալրել հարցերի ընտրված քանակով,
3. 2017 թվականին հիմնական հարցաթերթը լիովին համալրել նյութական զրկվածության վերաբերյալ հարցերով,

4. 2016/17 թ.թ. երեխաների կարիքների վերաբերյալ հարցաթերթը համալրել երեխաների հետ կապված նյութական գրկվածության հարցերով համաձայն ՀՀ ԱՎԾ-ի և համապատասխան շահառուների կողմից հաստատված դաշտային աշխատանքի ժամանակացույցի:

Գլխի վերջում ներկայացված է նոր հարցերի տեղաբաշխումը, վերադասավորումը և փոփոխությունները: Ավելին, առաջարկները առավել հանգամանորեն ներկայացված են 4-7 հավելվածներում:

Նյութական գրկվածություն ամբողջ բնակչության համար

Փորձնական հետազոտությունը բաղկացած է երկու բաժնից: Առաջինը ներառում է 15 հարց, որոնք տրվում են տնային տնտեսության մակարդակով: Երկրորդը բաղկացած է ևս 5 հարցից և դրանք տրվել են անհատական մակարդակով:

Այս բոլոր հարցերը պետք է ներառվեն ՏՏԿԱՀ-ում: Ինչևէ, ամբողջական ամբողջական համալրում կլինի 2017 թվականի հետազոտության համար: Գործող ՏՏԿԱՀ հարցաթերթի կառուցվածքում նոր հարցերի տեղաբաշխման վերաբերյալ առաջարկը քննարկվեց և հաստատվեց ՀՀ ԱՎԾ-ի կողմից (2017 թվականի նոր հարցաթերթը ներկայացված է 7-րդ հավելվածում):

Ինչ վերաբերվում է 2016 թվականին, միայն եզրային փոփոխություններ են թույլատրելի հիմնական կառուցվածքի հետ կապված՝ հաշվի առնելով հաջորդ տարվա հետազոտության համար արդեն իսկ արված բավականին մեծ աշխատանքը: Համալրումը հեշտությամբ կարող է իրականացվել երկարաժամկետ օգտագործման իրերի վերաբերյալ երեք հարցերի համար (համակարգչի/ինտերնետային կապի/հեռախոսի առկայություն), քանի որ դրանք արդեն տրվում են հիմնական հետազոտության համար: Այս դեպքում, բավական է փոխել ներկայումս օգտագործվող հարցերի ձևաչափը, որպեսզի տարանջատվի «ոչ, որովհետև չի կարող իրեն թույլ տալ» և «ոչ, մեկ այլ պատճառով»: Սրան կարելի է ավելացնել ևս երկու կետ (լվացքի մեքենայի/գունավոր հեռուստացույցի առկայություն): Ինչ վերաբերվում է «մեքենա ունենալուն», որն արդեն իսկ առկա է ՏՏԿԱՀ հարցաթերթում, արվում են հետևյալ փոփոխությունները. պետք է հանել հարցերի ձևաչափերի և պատասխանողների ընտրության գտման (միայն գյուղական տնային տնտեսությունների համար) հարցերը:

Այս փոփոխությունները հաստատվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից և արդեն իսկ իրականացվել են 2016 թվականի ՏՏԿԱՀ հարցաթերթի թե՛ անգլերեն, թե՛ հայերեն տարբերակներում: Դրանք ներկայացված են 5-րդ հավելվածում:

Նաև համաձայնություն ձեռք բերվեց, որ մնացած հարցերը (14) կընդգրկվեն առանձին մոդուլում 2016 թվականի գործողությունների համար: Մոդուլի տեղեկատվական բովանդակությունը (ներառված է 4-րդ հավելվածում) կհավաքագրվի ՏՏԿԱՀ ամբողջ ընտրանքի համար:

Երեխաների նյութական գրկվածություն

Երեխաների նյութական զրկվածության վերաբերյալ հատվածը ներառվում է երեխաների կարիքների հարցաթերթի (ԵԿՀ) մեջ: ԵԿՀ-ն արդեն իսկ ներառում է նման կետեր և ունի արդյունքների զեկուցման նման մոտեցում: Այս հարցը քննարկվեց ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում: Հանդիպման ընթացքում ձեռք բերվեց համաձայնություն թե՛ այս բաժինը ԵԿՀ-ում ներառելու, թե՛ բոլոր երեխաներին անհատապես վերաբերվող հարցերի մասին զեկուցելու վերաբերյալ:

ԵԿՀ-ում փորձնական հարցերի համալրումը ենթադրում է որոշ փոփոխություններ ԵԿՀ-ում (նոր տարբերակը ներկայացված է 6-րդ հավելվածում): Երեխաների կարիքների հարցաթերթում առաջին աղյուսակը բաժանված է երկու մասի: Առաջին մասը բաղկացած է 1-17 տարեկան երեխաների համար տվող հարցերից (հինգ հարց փորձնական հետազոտությունից, մեկը՝ սկզբնական ԵԿՀ-ից), իսկ երկրորդ աղյուսակը բաղկացած է 6-17 տարեկան դպրոցական երեխաների համար տրվող հարցերից (մեկ հարց փորձնական հետազոտությունից, մնացած հարցերը՝ ԵԿՀ-ից): Քանի որ ԵԿՀ-ում երկու հարցերի միջև համընկման հավանականություն կար (Արդյո՞ք ձեր երեխան ստանում է հրավեր/հրավիրում է ընկերներին հավաքությունների գոնե ամիսը երկու անգամ) և մեկ փորձնական հարց (Արդյո՞ք ձեր երեխան նշում է հատուկ առիթներ՝ ծննդյան օր, տարեդարձ, կրոնական տոներ), «հավաքույթ» բառը հանվել է ԵԿՀ հարցերից: Դաշտային աշխատանքում ԵԿՀ հարցերը կարող են տրվել ՏՏԿԱՀ հարցազրույցի համատ տնային տնտեսություն այցելություններից մեկի ժամանակ:

Հարցերին չպատասխանելու դեպքում փոխկապակցվածության բարելավում

Հայաստանյան ՏՏԿԱ հետազոտության մեջ կան որոշ հարցեր, որոնք ունեն պատասխանի «Չգիտեմ» կամ «Դժվար է պատասխանել» տարբերակներ: Հարցերի մեծամասնության դեպքում նման տարբերակ գույություն չունի, ինչը հանգեցնում է նրան, որ անհնար է հասկանալ տվյալների սխալների և իրական անպատասխան հարցի միջև տարբերությունը, այսինքն դեպքերը, երբ պատասխանողը կամ չգիտի պատասխանը, կամ չի ուզում պատասխանել: Այս հարցը բարձրացվել է ՀՀ ԱՎԾ անձնակազմի կողմից առաքելության ընթացքում:

Հետևաբար, հարցազրուցավարների համար պետք է ապահովվի չպատասխանված հարցերի համապատասխան ծածկագրում, բայց հարցազրույցի ընթացքում «Չգիտեմ/Պատասխան չկա» տարբերակները չպետք է տրվեն պատասխանողներին որպես այդպիսին: Հարցազրուցավարներին պետք է խորհուրդ տալ գործադրել բոլոր ջանքերը տնային տնտեսությունից յուրաքանչյուր հարցի համար ստանալ պատասխան, և նշել պատասխանը որպես “-1” (կամ մեկ այլ ստանդարտացված խորհրդանշական արժեք), եթե պատասխանողը ի վիճակի չէ ապահովել պատասխան:

2016 և 2017 թ.թ. հիմնական հետազոտությունները (SSԿԱՀ և ԵԿՀ) փորձնական հետազոտության հարցերով համալրելու հեռանկարը

I. 1-4 հարցերը տրվում են տնային տնտեսության մակարդակով

1. Կարո՞ղ եք ասել՝ արդյո՞ք Ձեր տնային տնտեսությունը...

Պատասխանների ձևաչափեր.	2016թ. SSԿԱՀ-ում տեղաբաշխումը	2017թ. SSԿԱՀ-ում տեղաբաշխումը
1. Այո 2. Ոչ – չի կարող իրեն թույլ տալ 3. Ոչ – այլ պատճառ		
1.1. ունի համակարգիչ	SSԿԱՀ Գ8_13 [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]	SSԿԱՀ Գ8_13 [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]
1.2. ունի ինտերնետային կապ	ԿԱՀ Գ8_14 [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]	SSԿԱՀ Գ8_14 [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]
1.3. ունի հեռախոս (ֆիքսված կամ բջջային)	ԿԱՀ Գ8_9 & ԿԱՀ Գ8_10 [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]	SSԿԱՀ Գ8_9 & SSԿԱՀ Գ8_10 [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]
1.4. ունի գունավոր հեռուստացույց	Սա պետք է ավելացվի հարցի Գ8 բաժնին [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]	Սա պետք է ավելացվի հարցի Գ8 բաժնին [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]
1.5. ունի լվացքի մեքենա	Սա պետք է ավելացվի հարցի Գ8 բաժնին [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]	Սա պետք է ավելացվի հարցի Գ8 բաժնին [Գ8-ի բոլոր կետերի համար պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար]
1.6. ունի անձնական	SSԿԱՀ Գ26 [Գ26-ի բոլոր կետերի համար	SSԿԱՀ Գ26 [Գ26-ի բոլոր կետերի համար

օգտագործմա մեքենա/ֆուրգոն	պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար] Գ26-Գ30 հարցերը ներկայումս տրվում են միայն գյուղական տնային տնտեսություններին: Գոնե Գ26 պետք է տրվի բոլոր տնային տնտեսությունների համար:	պատասխանների ձևաչափերը պետք է փոխվեն համապատասխանաբար] Գ26-Գ30 հարցերը ներկայումս տրվում են միայն գյուղական տնային տնտեսություններին: Գոնե Գ26 պետք է տրվի բոլոր տնային տնտեսությունների համար:
1.7. կարող է փոխարինել մաշված կահույքը նորով, եթե անհրաժեշտություն լինի	ԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Գ – կացարանային պայմաններ: Այս նոր հարցի լավագույն տեղը ներկայիս Գ8 և Գ9 միջև է:

2. Նախորդ 12 ամիսների ընթացքում տնային տնտեսությունը հետևյալի համար պարտք ունեցե՞լ է, այսինքն՝ ֆինանսական դժվարությունների պատճառով ի վիճակի չի եղել ժամանակին վճարել:

Պատասխանների ձևաչափեր.	2016թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը	2017թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը
1. Այո, մեկ անգամ 2. Այո, երկու կամ ավելի անգամ 3. Ոչ 4. Չի գործում		
2.1. Վարձակալության կամ հիփոթեքի վճար հիմնական կացարանի համար	առանձին մոդուլ	Բաժին Գ – կացարանային պայմաններ: Լավագույն տեղը ներկայիս Գ3 և Գ4 միջև է: Լավ կլինե՞ր ավելացնել հարց հիփոթեքի վճարի մասին («տնային տնտեսությունը կատարո՞ւմ է հիփոթեքի վճար կապված կացարանի հետ») Բոլոր տնային տնտեսություններին, որոնք վճարում են վարձ (Գ2=2,3,4,5) և կացարանի համար ունեն հիփոթեկային վճարներ (Գ1=1 և “հիփոթեկ=այո” պետք է տրվեն հարցեր

		վարձավճարների կամ հիփոթեկի հետ կապված պարտքերի մասին:
2.2. Հիմնական կացարանի (ջեռուցում, էլեկտրաէներգիա, գազ, ջուր, և այլն) կոմունալ ծախսեր	SSԿԱՀ առանձին մոդուլ	Այս նոր հարցի համար լավագույն տեղը ներկայիս Գ15 և Գ16, աղբահանության մասին հարցից հետո (Գ15):
2.3. Ապառիկի կամ այլ վարկերի մարումներ	SSԿԱՀ առանձին մոդուլ	Լավագույն տեղը Ի բաժինն է – Պարտքեր Այն կտրվի նոր հարցի մեջ, առանձնացված Աղյուսակ 1-ից: Աղյուսակ 1-ի վերջում պետք է ավելացնել նոր հարց «Այլ նպատակով»:

3. Կարո՞ղ եք ասել՝ արդյո՞ք Ձեր տնային տնտեսությունը կարող է իրեն թույլ տալ...

Պատասխանների ձևաչափեր.	2016թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը	2017թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը
1. Այո 2. Ոչ		
3.1. Անսպասելի ծախս 40.000 դրամի չափով և վճարել սեփական ռեսուրսների միջոցով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու)	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան: Այս բաժինը ներկայումս 16+ տարիքի անդամների համար է: Սկզբում պետք է ավելացնել նոր աղյուսակ, որը հարցերը պետք է տրվեն տնային տնտեսության մակարդակով: Հարցը կլինի առաջինը Լ բաժնի նոր աղյուսակում:
3.2. Տանը համարժեք ջերմաստիճան ապահովել	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Այս նոր հարցի համար լավագույն տեղը ներկայիս Գ14 և Գ15 միջև է:
3.3. Օրը մեջ մսով, հավով, ձկնով (կամ համարժեք բուսականային) կերակուր ուտել	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան: Այս բաժինը ներկայումս 16+ տարիքի անդամների համար է: Սկզբում պետք է ավելացնել նոր աղյուսակ, որը հարցերը պետք է տրվեն տնային տնտեսության մակարդակով: Հարցը կլինի երկրորդը Լ բաժնի նոր աղյուսակում:
3.4. Մեկ շաբաթյա ամենամյա արձակուրդ տնից հեռու՝ այդ	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել

թվում նաև մնալով երկրորդ կացարանում կամ ընկերների/բարեկամների մոտ (տնային տնտեսությունը ամբողջությամբ)		համապատասխան: Այս բաժինը ներկայումս 16+ տարիքի անդամների համար է: Սկզբում պետք է ավելացնել նոր աղյուսակ, որը հարցերը պետք է տրվեն տնային տնտեսության մակարդակով: Հարցը կլինի երրորդը Լ բաժնի նոր աղյուսակում:
--	--	---

4. Արդյո՞ք Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը բավարար է հոգալ նվազագույն ծախսերը:

1. Մեծ դժվարությամբ 2. Դժվարությամբ 3. Որոշակի դժվարությամբ 4. Բավական հեշտությամբ 5. Հեշտությամբ 6. Շատ հեշտությամբ	2016թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը	2017թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը
	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան: Այս բաժինը ներկայումս 16+ տարիքի անդամների համար է: Սկզբում պետք է ավելացնել նոր աղյուսակ, որը հարցերը պետք է տրվեն տնային տնտեսության մակարդակով: Հարցը կլինի չորրորդը Լ բաժնի նոր աղյուսակում:

Ներառվել է Լ բաժնի այս նոր մասում M15 հարցի ավելացման առաջարկ

II. Հարց 5-ը տրվում է տնային տնտեսության 16-ից բարձր տարիքի բոլոր անդամներին:

Տնային տնտեսությունում 16 կամ բարձր տարիքի յուրաքանչյուր անդամի համար կարո՞ղ եք ասել, որ նրանք ունեն կամ անում են հետևյալը:

Տնային տնտեսության անդամների հերթական համարները տնային տնտեսությունների ցանկից, >=16 տարեկան <u>Պատասխանների ձևաչափեր.</u> 1.Այո 2. Ոչ – չի կարող իրեն թույլ տալ 3. Ոչ – մեկ այլ պատճառ	2016թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը	2017թ. ՏՏԿԱՀ-ում տեղաբաշխումը
5.1. Ունի իր ոտքին համապատասխան երկու զույգ կոշիկ	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան, ինչը ներկայումս տրվում է 16+ տարիքի անդամների համար է: Հարցը կլինի առաջինը Լ բաժնի նոր աղյուսակում:
5.2. Կարող է փոխարինել մաշված հագուստը (ներառյալ հնաճ հագուստը) նոր (նախկինում չօգտագործված) հագուստով	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան, ինչը ներկայումս տրվում է 16+ տարիքի անդամների համար է: Երկրորդը նոր աղյուսակում:
5.3. Մասնակցում է ընկերների/	ՏՏԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել

ընտանիքի (բարեկամների) հետ ճաշկերույթի/խնջույթի ամիսը առնվազն մեկ անգամ		համապատասխան, ինչը ներկայումս տրվում է 16+ տարիքի անդամների համար է: Երրորդը նոր աղյուսակում:
5.4. Տնից դուրս կանոնավոր կերպով (տարեկան մի քանի անգամ) մասնակցում է վճարովի ժամանցային այնպիսի միջոցառումների ինչպիսիք են սպորտը, կինոն, համերգը և այլն	SSԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան, ինչը ներկայումս տրվում է 16+ տարիքի անդամների համար է: Չորրորդը նոր աղյուսակում:
5.5. Ծախսում է իր վրա շաբաթականփոքր գումար (առանց ստիպված լինելու խորհրդակցել որևէ մեկի հետ)	SSԿԱՀ առանձին մոդուլ	Բաժին Լ – Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը թվում է առավել համապատասխան, ինչը ներկայումս տրվում է 16+ տարիքի անդամների համար է: Հինգերորդը նոր աղյուսակում:

III. Հարց 6-ը տրվում է տնային տնտեսության 1-16 տարեկան բոլոր անդամներին

6. * Տնային տնտեսությունում 1 տարեկանից բարձր տարիքի (16-ից ցածր) բոլոր երեխաների համար կարո՞ղ եք ասել, որ նրանք ունեն կամ անում են հետևյալը....

Պատասխանների ձևաչափեր. 1.Այո 2. Ոչ, որովհետև տնային տնտեսությունը չի կարող իրեն թույլ տալ 3. Ոչ, մեկ այլ պատճառ 4. Կիրառելի չէ	2016թ. SSԿԱՀ-ում տեղաբաշխումը	2017թ. SSԿԱՀ-ում տեղաբաշխումը
6.1. Ունեն որոշ նոր (նախկինում	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր

չօգտագործված) հագուստ	Երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:	Երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:
6.2. Օրը մեկ անգամ ուտում են թարմ մրգեր կամ բանջարեղեն	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:
6.3 Օրը երեք անգամ ճաշում են	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:
6.4 Օրը գոնե մեկ անգամ ուտում է մսով, հավով կամ ձկով (կամ բանջարեղենային համարժեքով) կերակուր	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:
6.5 Նշում է հատուկ առիթները (ծննդյան օր, կրոնական տոներ)	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:	Պետք է տրվի առանձին 1-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:
6.6 Մասնակցում է դպրոցական ճամփորդություններին կամ դպրոցական միջոցառումներին, որոնք վճարովի են	Պետք է տրվի առանձին 6-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:	Պետք է տրվի առանձին 6-17 տարեկան բոլոր երեխաների համար անհատապես: Ներառված է երեխաների կարիքների հարցաթերթում:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15 2015թ. նոյեմբերի 9-13

Բաղադրիչ 4. Աղքատության վիճակագրություն

Գործողություն 4.2. Փորձնական հետազոտության արդյունքների թեստավորում

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքները և չափանիշները

Պարտադիր արդյունքներ.

- Սոցիալական բացառումների ներդրված և հաշվարկված վիճակագրություն (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Նախագծվել է հարցաթերթ սոցիալական բացառումների փորձնական հետազոտության համար (2015թ. հոկտեմբեր)
- Իրականացվել է փորձնական հետազոտություն (2015թ. դեկտեմբեր)
- Հաշվարկվել են փորձնական արդյունքները (2015թ. դեկտեմբեր)
- Ներկայացվել է երեխաների համար սոցիալական բացառումների ցուցանիշների համակարգ (2017թ. հուլիս)
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմը վերապատրաստվել է սոցիալական բացառումների վիճակագրության հարցերի գծով (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Հավաքագրված փորձնական տվյալների ուսումնասիրում
- Տվյալների որակի վերլուծություն
- Հարցաթերթի լրամշակում
- Տարեկան ՏՏԿԱՀ-ում հարցաթերթի ինտեգրման պլան
- Համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավում քննարկումներում

2. Գործողության սպասվող արդյունք

- Հավաքագրված տվյալները ուսումնասիրված են
- Որակը ստուգված և վերլուծված է
- Հարցաթերթը լրամշակված է
- Պլանը մշակված է
- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագիրը պլանավորված է (4.3 ծրագրված է 2016թ. մայիսին (ուսումնական այց ԻՍՏԱՆ))

3. Մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Տկն Դիանա Մարտիրոսովա, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների բաժնի պետ

Այլ աշխատակիցներ

- Տկն Արմենուհի Առուշանյան, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության ՏՏ զարգացման բաժնի պետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Լուսինե Մարկոսյան, տնային տնտեսությունների բաժնի գլխավոր մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Աիդա Բադալյան, տնային տնտեսությունների բաժնի առաջատար մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Արուս Գալստյան, տնային տնտեսությունների բաժնի առաջին կարգի մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Լատիրա Ավետիսյան, տնային տնտեսությունների բաժնի երկրորդ կարգի մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

ԱԵ փորձագետներ

Պրն Դավիդե Դի Լաուրեա, փորձագետ, Իտալիայի վիճակագրություն

Պրն Յուհա Հոնկկիլա, փորձագետ, Ֆինլանդիայի վիճակագրություն

Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր

Ներկայացուցիչներ

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից
- ՀՀ կրթության և գիտության նախարարությունից
- ՀՀ առողջապահության նախարարությունից
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամից

նույնպես կիրավիրվեն:

Հավելված 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, առավոտ	Հյուրանոց / ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընթացիկ իրավիճակի գնահատում Հավաքագրված փորձնական տվյալների ուսումնասիրում
Երկուշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տվյալների որակի վերլուծություն
Երեքշաբթի, առավոտ	NSSRA	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տվյալների որակի վերլուծություն
Երեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ	Սոցիալական բացառումների վիճակագրության վերաբերյալ նոր հարցաթերթի քննարկում համապատասխան շահագրգիռ կողմերի հետ Փորձնական հետազոտության հարցաթերթի ներկայացում
Չորեքշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Հարցաթերթի լրամշակում
Չորեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ	Հանդիպում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ՝ քննարկելու ՀՀ ԱՎԾ-ին հետազոտության հետ կապված աջակցելու հնարավորությունը Վերջնական հարցաթերթի ներկայացում
Հինգշաբթի, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Տարեկան ՏՏԿԱՀ-ում հարցաթերթի ինտեգրման պլան
Հինգշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ Բաղադրիչի	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված

		ղեկավարի հետ	Եզրակացությունների համաձայնեցում
		Չպլանավորված հանդիպումներ	Վեջնական պարզաբանումներ ԱԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, առավոտ	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ և առաջարկություններ հաջորդ գործողության համար և ՇԵ փորձագետների համար ենթադրվող աշխատանքային ծրագրի ներկայացում

Հավելված 3. Հանդիպումների մասնակիցներ

ՀՀ ԱՎԾ

Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
Դիանա Մարտիրոսովա, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների բաժնի պետ
Լուսինե Մարկոսյան, տնային տնտեսությունների բաժին
Արուս Գալստյան, տնային տնտեսությունների բաժին
Լատիպա Ավետիսյան, Տնային տնտեսությունների բաժին
Արմենուհի Առուշանյան, ՏՏ զարգացման բաժին
Ռուզաննա Շաբոյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Էմմա Իսախանյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժին
Աննա Հակոբյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության բաժին
Լեոնիդ Սողոմոնյան, ՀՀ ԱՎԾ

Արտաքին շահառուներ

Լուսինե Երեմյան, ՄԱԿ երեխաների հիմնադրամ
Աստղիկ Մինասյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԹՄԽ աշխատակազմ

Պիտեր Բոնաստեդ Անան Հանսեն, ԹՎինինգի մշտական խորհրդատու
Մարգարիտ Բեջանյան, ԹՄԽ օգնական
Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ

Հավելված 4. 2016թ. սոցիալական բացառումների մոդուլի հարցաթերթ

Ընդհանուր նշում.

- 1-4 հարցերը պետք է տրվեն տնային տնտեսության մակարդակով,
- 5-րդ կետի հարցերը պետք է տրվեն 16-ից բարձր անդամների համար,

1. Նախորդ 12 ամիսների ընթացքում տնային տնտեսությունը հետևյալի համար
2. պարտք ունեցե՞լ է, այսինքն՝ ֆինանսական դժվարությունների պատճառով ի վիճակի չի եղել ժամանակին վճարել

	1 Այո, մեկ անգամ	2 Այո, երկու և ավելի անգամ	3 Ոչ	Կիրառելի չէ
Վարձակալության կամ հիփոթեքի վճար հիմնական կացարանի համար				
Հիմնական կացարանի կոմունալ ծախսեր (ջեռուցում, էլեկտրաէներգիա, գազ, ջուր և այլն)				
Ապառիկի կամ այլ վարկերի մարումներ				

3. Ասացե՞ք խնդրեմ, եթե կարիք լինի, արդյո՞ք ձեր տնային տնտեսությունը կարող է փոխարինել մաշված կահույքը, ներառյալ կահույքի առանձին առարկաները:

1. Այո
2. Ոչ, չի կարող իրեն թույլ տալ
3. Ոչ, այլ պատճառով

4. Ասացե՞ք խնդրեմ, արդյո՞ք ձեր տնային տնտեսությունը կարող է իրեն թույլ տալ...

	1 Այո	2 Ոչ
Անսպասելի ծախս 45.000 դրամի չափով և վճարել սեփական ռեսուրսների միջոցով (առանց պարտք վերցնելու կամ ֆինանսական օգնություն խնդրելու)		
Տանը համարժեք ջերմաստիճան ապահովել		
Օրը մեջ մտով, հավով, ձկով (կամ համարժեք բուսական/անասնական) կերակուր ուտել		
Մեկ շաբաթյա ամենամյա արձակուրդ տնից հեռու՝ այդ թվում նաև մնալով երկրորդ կացարանում կամ ընկերների/բարեկամների մոտ (տնային տնտեսությունը ամբողջությամբ)		

1. **Տնային տնտեսությունը կարող է ունենալ եկամտի տարբեր աղբյուրներ և դրան կարող են մասնակցել տնային տնտեսության ավելի քան մեկ անդամներ: Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը բավարարո՞ւմ է վճարելու անհրաժեշտ նվազագույն ծախսերը:**

1. Մեծ դժվարությամբ

2. Դժվարությամբ

3. Որոշակի դժվարությամբ

4. Բավական հեշտությամբ

5. Հեշտությամբ

6. Շատ հեշտությամբ

5. Տնային տնտեսությունում 16 և բարձր տարիքի յուրաքանչյուր անձի համար կարո՞ղ եք ասել, որ նրանք ունեն կամ անում են հետևյալը.

S/S 16 և բարձր տարիքի անդամի հերթական համարը տնային տնտեսության անդամների ցուցակից	Ունի իր ոտքին համապատասխան երկու գույգ կոշիկ	Կարող է փոխարինել մաշված հագուստը(ներառյալ հնաոճ հագուստը) նոր, նախկինում չօգտագործված հագուստով	Մասնակցում է ընկերների / ընտանիքի, բարեկամների հետ ճաշերույթի/ խնջույքի ամիսը առնվազն մեկ անգամ	Տնից դուրս կանոնավոր կերպով (տարեկան մի քանի անգամ) մասնակցում է վճարովի ժամանցային այնպիսի միջոցառումներիինչպիսիք են սպորտը, կինոն, համերգը և այլն	Ծախսում է իր վրա շաբաթական փոքր գումար (առանց ստիպված լինելու խորհրդակցելորևե մեկի հետ)
	1 Այո 2 Ոչ, որովհետև չի կարող իրեն թույլ տալ 3 Ոչ – մեկ այլ պատճառ				
Չափահաս 1					
Չափահաս 2					
...					
Չափահաս n					

Հավելված 5. 2016 թ. ԿԱՀ հարցաթերթի համար առաջարկվող փոփոխություններ

Ընդհանուր ծանոթություններ.

- Փոփոխությունները նշված են կանաչ գույնով,
- Հարցերի համարակալումը չի փոփոխվել 2015թ. պաշտոնական տարբերակի հետ համեմատությամբ,
- Նոր հարցերը նույնականացվում են ըստ հարցաթերթում առաջարկվող տեղի. օրինակ, Գ3 և Գ4 միջև գտնվող երկու նոր հարցերը կհամարակալվեն Գ3ա և Գ3բ,
- Երբ առաջարկվում են պատասխանների ձևաչափի հետ կապված փոփոխություններ, ներկայացվում են թե՛ հին, թե՛ նոր տարբերակները:

